ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1372 16.09.2013թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ
ՄՈՒՏՔ № 3943
18 09 2013 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելություն է կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Գորիսի ՁՊՎ, որի ընթացքում արձանագրվել է.

Թերություն.

1. Ինչպես նախորդ այցելության ժամանակ, այս այցելության ընթացքում էլ արձանագրվել է, որ սանհանգույցը գտնվում է կեղտոտ, հակահիգիենիկ վիճակում:
2. <<Ձերբակալված անձանց խցերից դուրս բերման>> գրանցամատյանը կրկին լրացվում է ջնջումներով:

Խախտում.

1. Կարեն Սամվելի Կուղղինյանը ըստ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի ՁՊՎ է ընդունվել 24.06.2013թ-ին ժամը 18^{40}-ին, իսկ Արմեն Էդիկի Տատինցյանը՝ 24.06.2013թ-ին ժամը 18^{45}-ին: Երկու դեպքում էլ նշված անձիք տեղափոխվել են ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ, և նշված է միայն նրանց տեղափոխելու ժամը՝ 10.10, և բացակայում են գրառումները օրվա, ամիս - ամսաթվի վերաբերյալ: Արդյունքնում՝ պարզ չէ, թե նշված անձիք որքան են պահվել ՁՊՎ-ում: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 1,2/*
2. Ռաֆայել Ալեքսանդրի Ավագյանը բերման է ենթարկվել Գորիսի ոստիկանության բաժին 21.05.2013թ-ին ժամը 17^{30}-ին: ժամը 19^{30} ներկայացվել է քննիչին, իսկ ժամը 20^{20}-ին

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

6279
18 09

ընդունվել է ՀՊՎ: Ըստ «Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու» գրանցամատյանի Ռ. Ավագյանը Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան է տեղափոխվել խափանման միջոց կիրառելու նպատակով 24.05.2013թ-ին ժամը 18[50]-ին, արդեն իսկ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված առավելագույն 72 ժամ արգելանքի տակ պահելու խախտումով: */ կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ – 3,4,5/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություններ թերությունների և խախտումների վերաբերյալ:

Միաժամանակ խնդրում ենք Դիտորդական խմբի հրատապ հաշվետվություններին տալ առանձին մեկնաբանություններ՝ չընդհանրացնելով մարզի մնացած ՀՊՎ-ներում առկա հիմնախնդիրների հետ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N- 2/2-1-_____ «_____»_____ 2013թ.

Ձեր՝ 16.09.2013թ. թիվ 2621/1372 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ

Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից ս/թ սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցի ընթացքում արձանագրված խախտումները քննարկվել են ՀՀ ոստիկանության շտաբում, քննչական գլխավոր և Սյունիքի մարզային վարչություններում:

Սյունիքի մարզային վարչությունում անցկացվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով պարզվել է.

1. Ոստիկանության Գորիսի բաժնի ՁՊՎ-ի սանհանգույցը ենթարկվում է ամենօրյա մաքրման և ախտահանման, իսկ կեղտոտ լինելու տպավորությունը դիտորդների խմբի մոտ ստեղծվել է սալիկների հնամաշ և գունաթափված լինելու պատճառով:

2. <<Ձերբակալվածներին խցից դուրս բերելու գրանցամատյան>>-ը ջնջումներով լրացնելու վերաբերյալ հայտնվում է, որ Գորիսի բաժնի պետի ուշադրությունը հրավիրվել է ՁՊՎ-ի գրանցամատյաններում վարչակազմի կողմից շտապողականության հետևանքով կատարած ջնջումների վրա և վերջիններիս տրվել են համապատասխան հանձնարարականներ:

3. <<Ձերբակալված անձանց հաշվառման գրանցամատյան>>-ի 9-րդ սյունակում կալանավոր Կ.Կուրղինյանին ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ և կալանավոր Ա.Տատինցյանին ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ տեղափոխման օրը, ամիսը և տարեթիվը ոստիկանության Սյունիքի մարզային վարչության ուղեկցող դասակի 2-րդ ջոկի հրամանատար, ոստիկանության ենթասպա Գ.Ավետիսյանի կողմից բաց է թողնվել շտապողականության պատճառով, քանի որ, կալանավորներն անմիջապես դուրս են բերվել ՁՊՎ-ի խցերից և հանձնվել ուղեկցող խմբին: Սակայն <<Ձերբակալվածներին խցից դուրս բերելու գրանցամատյան>>-ի 3-րդ, 4-րդ և 7-րդ սյունակներում հստակ երևում է դուրս բերման նպատակը, հիմքը և ժամը՝ 27.06.2013թ. ժ.10.10-ն: Բացի այդ,

ծառայողական քննության ընթացքում պարզվել է նաև, որ <<Ձերբակալված անձանց հաշվառման գրանցամատյան>>-ի 9-րդ սյունակում ոստիկանության ենթասպա Գ.Ավետիսյանի կողմից թույլ է տրվել ևս մեկ թերություն. Ա.Տատինցյանը տեղափոխվել է ՀՀ ԱՆ <<Դատապարտյալների հիվանդանոց>> ՔԿՀ, մինչդեռ Գ.Ավետիսյանը մատյանում նշագրել է ՀՀ ԱՆ <<Նուբարաշեն>> ՔԿՀ:

Այսուհանդերձ, ոստիկանության ենթասպա Գ.Ավետիսյանը խիստ նախազգուշացվել է իր գործառութային պարտականությունները պատշաճ ձևով կատարելու և հետագայում նմանատիպ վրիպակները բացառելու համար:

Հարկ է նշել, որ այս բացթողումով կալանավորներ Կ.Կուրղինյանի և Ա.Տատինցյանի իրավունքները չեն խախտվել:

4. Կասկածյալ Ռ.Ավագյանը 21.05.2013թ. ժ.17.30-ին բերման է ենթարկվել ոստիկանության Գորիսի բաժին, նույն օրը ժ.19.30-ին ներկայացվել է քննիչին և ժամը 20.20-ին ձերբակալվել: 24.05.2013թ. Ռ.Ավագյանին ՀՀ քրեական դատավարության 129-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն, 72 ժամվա ընթացքում մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդություն է ներկայացվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան: Դատարանի պահանջով մեղադրյալ Ռ.Ավագյանը ՁՊՎ-ից դատարան է տեղափոխվել ժամը ժ.18.50-ին, ինչը պայմանավորված է եղել դատարանի աշխատանքի ծանրաբեռնվածության հանգամանքով: Նախաքննական մարմնի միջնորդությունը դատարանի կողմից բավարարվել է:

Հարկ է նշել, որ ինչպես ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներին, այնպես էլ Սյունիքի մարզային վարչության Գորիսի բաժնի հերթապահ մասի ՁՊՎ-ի վարչակազմին հանձնարարվել է խստորեն պահպանել անձին արգելանքի վերցնելու և կասկածյալի ձերբակալման օրենքով սահմանված ժամկետների պահանջները:

ՀՀ ոստիկանության շտաբ